ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) 2017 դեկտեմբերի 8-10-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Զարմինե Զեյթունցյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2017 թվականի դեկտեմբերի 8-10-ը

4. **Գործուղման նպատակը՝**

2017 թվականի դեկտեմբերի 9-ին «Վերադարձ Հայաստան» (Repat Armenia) հիմնադրամի կողմից կազմակերպվող «Պատկերացրեք Հայաստանը» (Imagine Armenia) համաժողովին մասնակցելու, ելույթով հանդես գալու նպատակով:

«Վերադարձ Հայաստան» հիմնադրամի առաքելությունն է Հայաստանի ապագա զարգացման համար բարձր մասնագիտական որակավորում ունեցող անձանց և իրենց ընտանիքներին Հայաստան հայրենադարձության մասին տեղեկացնելու, վերադարձը նախաձեռնելու և արդեն Հայաստանում գտնվող հայրենադարձների աջակցությունը:

Հիմնադրամը 2012թ-ից աշխատում է այն մարդկանց հետ, ովքեր կամավոր և գիտակցաբար որոշում են ապրել և աշխատել Հայաստանում:

5. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Վերադարձ Հայաստան» (Repat Armenia) հիմնադրամի կողմից կազմակերպված «Պատկերացրեք Հայաստանը» համաժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը ներկայացրել է շնորհանդես:

Ռուսաստանի Դաշնության հայ համայնքի ներկայացուցիչներին և համաժողովի մասնակիցներին տրամադրել է Հայաստանի մասին ճանաչողական նյութեր՝ բրոշյուրներ, քարտեզներ, թռուցիկներ (flyer):

Հանդիպումներ է ունեցել հայ համայնքի մի շարք ազդեցիկ մարդկանց հետ:

Մոսկվայի փաստաբանների միության նախագահ Յուրի Չանչուրյանի հետ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերել Հայաստանի մասին զբոսաշրջային ուղեցույցների տպագրությունը հովանավորելու համար:

6. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյան

7. Ստորագրությունը, ամսաթիվը՝